



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N° 06-Լ

ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը չեն սահմանում վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթի միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներ պարունակող հայցադիմումների քննության դատավարական կանոնները, ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Տարբեր, մասնավորապես, վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթի, սակայն միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներ պարունակող հայցադիմումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից քննության հարցը լուծվում է՝ ելնելով հիմնական պահանջի բնույթից:

2. Հիմնական է համարվում այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացվելիք գործն ըստ էության լուծող դատական ակտը կարող է կանխորոշել հետևանք ներկայացնող պահանջի (պահանջների) լուծման ելքը:

3. Երբ հիմնական պահանջը վարչաիրավական բնույթի է, անկախ հետևանք ներկայացնող պահանջի (պահանջների) բնույթից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հայցադիմումը քննում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով:

4. Երբ հիմնական պահանջը քաղաքացիաիրավական բնույթի է, անկախ հետևանք ներկայացնող պահանջի (պահանջների) բնույթից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հայցադիմումը քննում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով:

5. Այն դեպքում, երբ վարչաիրավական բնույթի հիմնական պահանջ պարունակող հայցադիմումի հիման վրա հարուցված վարչական գործով ներկայացված հակընդդեմ հայցադիմումով կամ երրորդ անձի հայցադիմումով հիմնական պահանջը քաղաքացիաիրավական բնույթի է, ապա գործը քննվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով:

6. Այն դեպքում, երբ քաղաքացիաիրավական բնույթի հիմնական պահանջ պարունակող հայցադիմումի հիման վրա հարուցված քաղաքացիական գործով ներկայացված հակընդդեմ հայցադիմումով կամ երրորդ անձի հայցադիմումով հիմնական պահանջը վարչաիրավական բնույթի է, ապա գործը քննվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

01 հունիսի 2013թ.

ք. Ստեփանակերտ